ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՓՈՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԼԵՎՈՆԻ

ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԱՅԼ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐԸ

ԺԲ.00.02. - §Հանրային իրավունք՝ մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ - Ռուսական (Սլավոնական) համալսարանի գիտական խորհրդի նիստում:

Գիտական ղեկավար՝ **իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Հայկի Խաչատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արմեն Հենրիկի Երիցյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մանուկ Հովհաննեսի Մուրադյան

Առաջատար կազմակերպություն՝ Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թվականի մարտի 16-ին, ժամը 16:00-ին ՀՀ պետական կառավարման ակադեմիայում գործող Իրավաբանության 041 մասնագիտական խորհրդում:
(0028, Երևան-28, Կիևյան 8):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թվականի փետրվարի 13-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Հայկի Խաչատրյան**

I. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի հետազոտության արդիականությունը. Ազգային պետականության զարգացման ներկայիս ժամանակաշրջանի առանձնահատկություններից է մարդու և քաղաքացու արժանապատվության, նրա իրավունքների ու ազատությունների լիարժեք ճանաչման ու իրացման երաշխիքների ապահովումը, ինչն իր հետ բերում է իրավական պետության պետական իշխանության հետագա ժողովրդականացում: Անկախ պետականության հռչակումից հետո սկսվել է քաղաքացիական հասարակության և իրավական պետության կառուցումը՝ հիմնված ժողովրդավարական սկզբունքների վրա:Իրավական և ժողովրդավարական պետության կառուցման գործընթացի հիմքում առաջնայինը մարդու իրավունքների ու ազատությունների հարգումն է:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»: Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ճանաչումն իր հետ բերում է նաև պետության լիովին այլ, նոր դերի ճանաչումն անձի նկատմամբ՝ հենց պետությունը գոյություն ունի մարդու համար, պետական իշխանության մարմինների հիմնական նպատակն է պաշտպանել մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները: Դրա հետ մեկտեղ, պետության վրա մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության գծով պարտավորությունների վերադրումը պահանջում է անձի ու պետության միջև հարաբերությունների հստակ օրենսդրական կարգավորում:

Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը, որն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասում, պատկանում է մարդու և քաղաքացու հիմնական սահմանադրական իրավունքների ու ազատությունների կատեգորիային: Նրանից, որքանով կատարյալ են ընդհանուր առմամբ այդ իրավունքների սահմանադրահիրավական երաշխիքները և անհատական հաղորդակցության գաղտնիության իրավունքը, մասնավորապես, կախված է իրենց իրացման արդյունավետությունը: Հաղորդագրությունների գաղտնիության նկատմամբ իրավունքի երաշխավորված իրականացումն իր հերթին բնութագրում է ժողովրդավարության այնպիսի կարևոր կողմը, ինչպիսին է յուրաքանչյուրի անձնական ազատության սահմանադրահիրավական կարգավիճակը, իսկ վերջին հաշվով՝ հասարակության սահմանադրական իրավակարգը:

Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի հիմնական երաշխիքներից մեկը՝ պետության ընդհանուր սահմանադրական պարտականությունն է, որը կայանում է իրավունքների ու ազատությունների ճանաչման, պահպանման ու պաշտպանության գործում:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ (էլեկտրոնային հաղորդակցության և փոստային կապի ցանցերով փոխանցվող) հաղորդումների գաղտնիության իրավունքի պահպանումն ու պաշտպանությունը ևս պետության պոզիտիվ պարտականությունն է:

Միջազգային համացանցերը, այդ թվում՝ Ինտերնետ գլոբալ համացանցը, զարգանում են ներառելով աշխարհի գրեթե բոլոր երկրների համացանցային տիրույթները, ինչի շնորհիվ նոր հնարավորություններ են բացվում համաշխարհային տնտեսության, քաղաքականության մեջ, ձեռնարկատիրության, միջանձնային հաղորդակցությունների ոլորտում, ի հայտ են գալիս շփման նոր ձևեր՝ ինչպես քաղաքացիները միմյանց հետ, այնպես էլ պետական իշխանության մարմինների շրջանակում:

Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, անձնական տվյալների միասնական բազմամակարդակ հենքի ձևավորումը, կյանքում էլեկտրոնային կառավարման համակարգերի ի հայտ գալն ընդգծում են մարդու մասնավոր կյանքի ոլորտի անձեռնմխելիությունն ապահովող գործող մեխանիզմի ստեղծման անհրաժեշտությունը, որը պետք է երաշխավորի էլեկտրոնային հաղորդակցության, փոստային և այլ կապի ցանցերի օգնությամբ փոխանցվող անհատական հաղորդագրությունների գաղտնիության ապահովումը:

Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի իրացման կառուցակարգի մշակման արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական ոլորտում կարևոր նշանակություն է ստանում տեղեկատվությունը ստանալու

և դրանից օգտվելու բնագավառում մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական երաշխիքների ապահովումը: Դրան հասնելու համար պահանջվում է. ա) ապահովել մարդու և քաղաքացու անձնական ու ընտանեկան գաղտնիքի, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի, սեփական արժանապատվության և սեփական բարի համբավի պաշտպանությունը, բ) պայմաններ ստեղծել օրենսդրությամբ սահմանված վերը թվարկված պաշտպանվող տեղեկատվության օգտագործման ու տարածման համար, եթե դա չի հակասում տեղեկությունների հավաքման նպատակներին, գ) օրենսդրական կարգավորումների ու ընթացակարգերի միջոցով արգելել անձի մասնավոր կյանքի վերաբերյալ տվյալների և այլ տեղեկատվության հավաքումը, հավաքագրումը, պահպանումն ու օգտագործումը կամ տարածումը՝ առանց նրա համաձայնության:

Այնուամենայնիվ, հասարակության զարգացման ժամանակակից փուլը բնութագրվում է տեղեկատվական ոլորտի աճող դերով, իսկ դրա անվտանգության ապահովումը դառնում է մեր պետության ազգային քաղաքականության առաջնահերթություններից մեկը:

Վերջապես, պետությունն իր վրա հասարակության կողմից դրված, քաղաքացիների ու երկրի անվտանգության ապահովման հետ առնչվող, խնդիրների լուծման ժամանակ, ինչպես նաև հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հանցավոր գործունեությամբ զբաղվող անձանց բացահայտման նպատակներով, իրավասու է թույլ տալ քաղաքացիների սահմանադրական իրավունքների ու ազատությունների որոշակի սահմանափակումներ, մասնավորապես, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքին վերաբերվող մասով, այսինքն խախտել անձի այն հաղորդագրությունների գաղտնիությունը, որոնք փոխանցվում են էլեկտրոնային հաղորդակցության, փոստային կամ այլ կապի ցանցերով:

Գործող օրենսդրությանը համապատասխան կապի ծառայություն մատուցող կազմակերպությունները (օպերատորները և պրովայդերը), որոնց վրա օրենքով դրված է կապի ոլորտում գաղտնիքի պահպանման պատասխանատվություն, պարտավոր են օրենքով սահմանված դեպքերում և կարգով ստեղծել տեղեկատվություն ստանալու հնարավորություն այն պետական մարմնի համար, որը լիազորված է իրավական համապատասխան հիմքերի առկայության դեպկերում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման շրջանակում ստեղծել օպերատիվ-տեխնիկական անհրաժեշտ պայմաններ , նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկման համար:

Նշված հարցերը, որոնք առնչվում են հիշատակված միջոցառումների իրականացման հետ, մեկ անգամ ևս ցույց են տալիս պետության բացառիկ դերակատարությունը հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման գործում և դրա նկատմամբ հսկողություն իրականացնելու կարևորությունը:

Ազգային իրավունքում օրենսդրական ակտերով ամրագրվում են նաև պետական մարմինների իրավաչափ միջամտության հիմքերը, սահմաններն ու պայմանները յուրաքանչյուր անհատի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանադրական իրավունքի իրացման և սահմանափակման վերաբերյալ:

Ուստի առաջին հերթին հարկավոր է կարևորել և ղեկավարվել այն կանխավարկածով, որ ընդհանուր առմամբ ազգային օրենքներով հետազոտության առարկա բնագավառում հաստատված սահմանափակումներն իրավաչափ են, դրանք համապատասխանում են համընդհանուր ընդունված սկզբունքներին և միջազգային իրավունքի նորմերին:Դրա հետ մեկտեղ մի շարք օրենսդրական դրույթներ ու իրավակիրառական փորձը ոչ բոլոր դեպքերում են համապատասխանում ներկա ժամանակաշրջանի պահանջներին, միջազգային փորձին և պրակտիկային:

Վերջին հանգամանքն անհրաժեշտություն է առաջացնում բացահայտելու ազգային օրենսդրության և իրավական պրակտիկայում առկա բացերն ու թերությունները և մշակելու գիտականորեն հիմնավորված առաջարկություններ՝ նպատակ ունենալով կատարելագործել ազգային օրենսդրությունը և բարելավել իրավակիրառելի պրակտիկան:

Հայրենական իրավագիտությունում այս աշխատանքն առաջին համալիր և համակողմանի հետազոտությունն է, որտեղ հանգամանորեն լուսաբանվել է նամակարգրության, հե-

ռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանադրահիրավական կարգավորումների տեսական ու կիրառական հիմնահարցերը: Ատենախոսության տեսական հետևություններն ու եզրահանգումները փաստարկված են մասնագիտական ու տեսական գրականության և նորմատիվ նյութի վերլուծության արդյունքների հիման վրա:

Ժամանակակից էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի գերարագ զարգացման, պետական և մասնավոր կազմակերպությունների, անհատների կողմից անձի մասնավոր կյանքին վերաբերող տեղեկատվության գաղտնի ձեռքբերման նորանոր հատուկ և այլ տեխնիկական միջոցների ստեղծման ու կիրառման պայմաններում, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության կառուցակարգերը դիտարկվում են որպես նորարարական գործընթաց: Ուստի աշխատանքում մանրամասն ուսումնասիրվել են ոչ միայն հետազոտման առարկա իրավունքի իրավակիրառական պրակտիկան, այլև տարբեր պետությունների համապատասխան փորձը, ինչպես նաև հաշվի է առնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումների կարևորությունն ու նշանակությունը:

Ատենախոսության մեջ փորձ է արվել բացահայտել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի պաշտպանության կառուցակարգերը, հատուկ ուշադրություն է դարձվել հետազոտման առարկա իրավունքի իրականացման ու պաշտպանության սահմանադրահիրավական երաշխիքների բովանդակության բացահայտմանը: Դրա հետ մեկտեղ հիմնավորվել է համապատասխան օրենսդրական պահանջների իրականացման նկատմամբ վերահսկողության մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությունը:

Այսպիսով, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության նկատմամբ յուրաքանչյուրի իրավունքի իրավական կարգավորման անհրաժեշտությամբ են պայմանավորված սույն ատենախոսության թեմայի ընտրությունը: Ընդ որում, ատենախոսության առարկան սահմանափակված է այդ իրավունքի իրացման տեսական ու կիրառական, ինչպես նաև կարգավորման սահմանադրահիրավական հիմնախնդիրների հետազոտությամբ:

Հենց գիտության ու տեխնիկայի զարգացման ժամանակակից պայմաններում նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի իրացման կառուցակարգերի ստեղծման անհրաժեշտությամբ է պայմանավորված ատենախոսական հետազոտության թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակների ու խնդիրների հարցադրումը:

Հետազոտության թեմայի գիտական մշակվածության աստիճանը. Ազգային սահմանադրական իրավունքի գիտության կողմից մենագրության մակարդակով բացակայում են հետազոտվող թեմայի հիմնախնդիրներին նվիրված աշխատություններ:Այդուհանդերձ, պետք է նշել, որ թեմայի վերաբերյալ ընդհանուր հարցերը վերլուծության առարկա են դիտարկվել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների համակարգում և կոնկրետացվել ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններում[1]:Այս առումով, անհրաժեշտ է ընդգծել, որ հետազոտվող թեմայի հիմնախնդիրները, բավականին խորությամբ ուսումնասիրվել են ռուս և արևմտյան գիտնականների աշխատություններում: Ընդ որում, թեմայի բազմաշերտությամբ պայմանավորված, դրա գիտական հետազոտությունը ենթադրում է առնվազն երեք մակարդակ, որոնք միմյանցից տարբերվում են իրենց կոնկրետության աստիճանով ու ծավալով: Ըստ այդմ էլ տարբերվում են հետևյալ մակարդակները.

Առաջին մակարդակն է՝ յուրաքանչյուրի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի, այլ սահմանադրական իրավունքների, յուրաքանչյուր մարդու հիմնական իրա-

---

[1] Տես՝Հայաստանի Հանրապետության սահմանադրության մեկնաբանություններ: Ընդ. խմբ. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի: Երևան, 2010, էջ 276-285, Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Պատ. խմբ. ի.գ. դ. պրոֆ. Ն.Ա. Այվազյան: Երևան, 2012, էջ 246-250, Ա.Հ. Խաչատրյան Հեռախոսային խոսակցությունների ու հեռահաղորդակցության այլ միջոցների գաղտնիության սահմանադրական և միջազգային իրավունքի ապահովման հիմնահարցերը // ՀՀ ԳԱԱ գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2014, էջ 11-16 և ուրիշներ:

վունքների ու ազատությունների ընդհանուր բնութագրերի վերացական ու տեսական արտացոլումը: Այս մակարդակի գիտական աշխատությունների հեղինակների թվում հարկավոր է նշել Վ.Ն.Այվազյանին, Ա.Հ.Երիցյանին, Գ.Գ.Հարությունյանին, Մ.Ն.Վիտրուկին, Լ.Դ.-Վոնոդինին, Վ.Ա.Կարտաշկինին, Ա.Ի.Կովլերին, Ե.Ի.Լուկաշևային, Գ.Վ.Մալցևին, Ն.Ի.Մատուզովին, Վ. Սամիգոսինին և այլոց:

Ատենախոսության երկրորդ մակարդակը ներկառուցվածքային է: Այն ենթադրում է անհատի դիտարկվող հիմնական իրավունքի հետազոտություն՝ այլ հիմնական իրավունքների հետ հարաբերակցության մեջ: Այդ մոտեցման հիմնադիրներն են Ն. Բլեքտոնն ու Ջ. Լոկը: Այս տեսության մշակման մեջ զգալի ներդրում են կատարել Գ. Ելլինեկը, Ն. Մ. Կորկունովը, Վ.Մ. Գեսսենը և ուրիշները:

Ատենախոսության երրորդը մակարդակը գիտագործնական (կիրառական) է: Այս առումով դիտարկվում են նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի տեսական-գործնական և իրավական կարգավորման մեխանիզմները՝ հաշվի առնելով նաև միջազգային փորձը: Այս մակարդակի գիտական աշխատությունների հեղինակների թվում հարկավոր է նշել Մ.Վ.-Բագլային, Ն.Ա.Բոգդանովային, Վ.Վ.Բոյցովային, Տ.Ա.Վասիլևային, Յու.Ա.Դմիտրիևին, Ա.Հ.-Խաչատրյանին, Ա.Ն.Կոկոտովին, Մ.Ի.Կուկուշկինին, Օ.Ե.Կուտաֆինին, Ի.Ա.Լեդյախինին, Վ.Լուչինինին, Տու.Մ.Տիխոմիրովին, Բ.Ա.Էբզեևին և այլոց:

Հետազոտության մեթոդաբանության հիմունքները. մեթոդաբանական հիմք են ծառայել դիալեկտիկական և ճանաչողության համագիտական վերլուծական միջոցները և դրանցից բխող մասնավոր գիտական մեթոդները՝ համակարգային կառուցվածքային, իրավաբանական, վերլուծության, համեմատական-իրավական և այլն: Դրանց կիրառումը թույլ է տալիս դիտարկել քննարկվող առարկան՝ այն կազմող տարրերի փոխկապակցվածության ու փոխկախվածության, ինչպես նաև իրենց ամբողջականության, բազմակողմանիության ու օբյեկտիվության մեջ:

Հետազոտության գիտական նորույթը. Այս առումով, սույն ատենախոսությունը որպես համալիր և բազմակողմանի հետազոտություն, ներառում է վերոնշյալ երեք մակարդակները և հավակնում է մասամբ լրացնելու հայրենական իրավագիտության մեջ առկա բացը:

Հետազոտության օբյեկտը կազմում են այն հասարակական հարաբերությունները, որոնք կարգավորում են նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի տեսական ու կիրառական հիմնախնդիրների համալիրը:

Հետազոտության առարկան կազմում են նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքը, դրա վրա հիմնված էլեկտրոնային հաղորդակցության ու փոստային կապի ցանցերով փոխանցվող հաղորդագրությունների (հեռահաղորդակցության) պաշտպանության իրավունքը, ինչպես նաև այդ իրավունքի անհիմն միջամտությունից պաշտպանության երաշխիքներ:

Հետազոտության նպատակն ու խնդիրները. Ատենախոսության հիմնական նպատակն է ուսումնասիրել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի ու դրա արդյունավետ պաշտպանության երաշխավորման հիմնահարցերն ու դրանց իրացման առանձնահատկություններ և կատարելագործման ուղիներ Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավորումների շրջանակում: Հետազոտության հիմնական նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

– հիմնավորել ու հստակեցնել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանադրական իրավունքի հասկացությունը, դիտարկել դրա հարաբերակցությունը մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի հետ,

– հստակեցնել նամակագրության, հեռախոսային խոսակցություններ, փոստային հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանադրական իրավունքի, որպես անձի իրավական կարգավիճակի տարրի, տեսական-իրավական նշանակությունը,

– հետազոտել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանադրաիրավական և միջազգային իրավական կարգավորումների միջազգային փորձը՝՝ կատարելով համեմատական իրավական վերլուծություն,

– հիմնավորել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի ու դրա արդյունավետ պաշտպանության ազգային իրավական երաշխիքները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներով ընդունված և նրա իրավական դիրքորոշումներով ամրագրված իրավական չափորոշիչների համատեքստում,

– բացահայտել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի տեղը մարդու և քաղաքացու հիմնական սահմանադրական իրավունքների ու ազատությունների ամբողջականության մեջ, որոշել դրա ընդհանուր և առանձնահատուկ բնութագրիչները,

– հետազոտել մարդու և քաղաքացու նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի իրացման և սահմանափակման սահմանադրաիրավական հիմքերն ու պայմանները.

- իրականացնել մարդու և քաղաքացու նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի և դրա ապահովման սահմանադրաիրավական երաշխիքների ու իրավակիրառ պրակտիկայի հիմնախնդիրների համալիր վերլուծություն:

Հետազոտության տեսական, նորմատիվ և փորձարարական (էմպիրիկ) հիմքերը. Սույն ատենախոսական աշխատանքի համար որպես տեսական հիմք ծառայել են հայրենական և արտասահմանյան հետևյալ գիտնականների՝ Վ.Ն.Այվազյանի, Ա.Հ.Երիցյանի, Ա.Հ.Խաչատրյանի, Գ.Գ.Հարությունյանի, Ս.Ս.Ալեքսեևի, Ս.Ա.Ավագյանի, Մ.Վ.Բազլայի, Վ.Վ.Բոյցովայի, Լ.Վ. Բոյցովայի, Ն.Վ.Վիտրուկի, Լ.Դ.Վոնոդինի, Գ.Ա.Գաջիևի, Յու.Դմիտրիևի, Օ.Ե.Կուտաֆինի, Վ.Վ.Լազարևի, Ե.Ա.Լուկաշևայի, Ն.Ի.Մատուզովի, Գ.Վ.Մալցևի, Ա.Ս.Մորցովեցի, Ի.Վ.Ռոստովսչիկովի, Պ.Սալնիկովի, Ի.Լ.Պետրուխինի, Տ.Ն.Ռադկոյի, Ֆ.Մ.Ռուդինսկու, Բ.Ն.Տոպորնինի և այլոց աշխատությունները:

Ատենախոսության մեջ ձևակերպված ու հիմնավորված են տեսական նոր դրույթներ և գործնական նշանակության եզրակացություններ ու առաջարկություններ:

Գիտական շրջանառության մեջ դիտարկվող սահմանադրական իրավունքի փոխարեն ներմուծվում է ավելի հակիրճ ու միաժամանակ բովանդակային եզրույթ՝ հաղորդագրությունների գաղտնիության իրավունք, որի էության, բովանդակության, կառուցվածքի վերաբերյալ ներկայացված են դրա պաշտպանության երաշխիքների համակարգը և իրացման մեխանիզմները: Այդ բոլոր տարրերը դիտարկվում են հաշվի առնելով գիտության ու տեխնիկայի զարգացման ժամանակակից մակարդակը:

Գիտական նորույթի տարրեր են բովանդակում նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ հիմնական դրույթները.

1) Սահմանված է, որ բովանդակային առումով «գաղտնիքն» ու «անձեռնմխելիությունը» իրար փոխլրացնող հասկացություններ են, սակայն, հետազոտման առարկա ոլորտի հասարակական հարաբերություններում նախընտրելի է «գաղտնիք» եզրույթի օգտագործումը, քանի որ այն ենթադրում է թաքցնել նաև միջանձնային հաղորդակցության փաստերը, այլ ոչ միայն նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների բովանդակությունը, ինչն, իր հերթին, անձեռնմխելի է այլ անձանց համար:

Այդ հիմնավորմամբ պայմանավորված, ատենախոսը արդարացված է համարում տարբեր տեսակի գաղտնիքների և սահմանադրական, և օրենսդրական պաշտպանությունը, քանի որ, եթե մասնավոր (անձնական) կյանքի իրավունքի գաղտնիքը, մի կողմից, անձի անձնական իրավունքն է սեփական կենսակերպը սահմանելու, ինչպես նաև անձի մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկությունը պահպանելու ու պաշտպանելու կապակցությամբ, ապա մյուս կողմից, այն կառուցվածքային տարրերի համակարգ է, որի բաղկացությունն է կազմում նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը:

2) Աշխատանքում հիմնավորվում են հայեցակարգային այն մոտեցումները, ըստ որոնց՝ ա) նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանադրական ամրագրումն ինքնին ընկալվում է որպես մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության, իրականացման կամ ապահովման երաշխիք, բ) այդ իրավունքը մասնավոր կյանքի անձեռնմխելիության ինստիտուտի հետ հարաբերակցության մեջ դրսևորվում է առավելապես որպես մարդու սուբյեկտիվ իրավունք, որն ապահովում է միջանձնային հաղորդակցութ-

յունների և տարբեր, այդ թվում՝ տեխնիկական միջոցների օգնությամբ փոխանցվող անձնական բնույթի տեղեկությունների գաղտնիությունը, գ) այն դիտարկվում է նաև որպես մարդու մասնավոր կյանքի գաղտնիքի իրավունք, որն իր իրավական բնույթով մեծապես պատկանում է անձնական գաղտնիքներին, այլ ոչ թե հանրային կամ մասնագիտական գաղտնիքներին:

3) Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքն ունի բարդ սահմանադրաիրավական բնույթ: Այդ առումով, ատենախոսի կարծիքով, որպես մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի տարր, այդ իրավունքի իրացման երաշխիքներում է արտահայտվում սահմանադրական կարգի էական կողմը, այն է, որ նշված իրավունքի պաշտպանության իրականացումն ունի միայն պոզիտիվ բովանդակություն, դիտարկվում է որպես անհատի ազատության ու հասարակության առջև պատասխանատվության իրացման ձև, և այդ իրավունքի իրականացմանը խոչընդոտող հակաիրավական ցանկացած գործողություն կարող է հանգեցնել կամ հանգեցնում է մարդու և քաղաքացու ազատության իրավունքի սահմանափակմանը:

Այս դիրքորոշման շրջանակում հիմնավորվում է հեղինակի այն եզրահանգումը, ըստ որի՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանադրական իրավունքի իրացման մեխանիզմն ինքնին ընկալվում է որպես կազմակերպչական, տեխնիկական, ինչպես նաև օրենսդրորեն երաշխավորված ու պետության կողմից պաշտպանվող մարդու և քաղաքացու իրավունքների ու պարտականությունների ողջ համալիրի իրականացման գործընթաց:

4) Մարդու և քաղաքացու անձնական ազատության սահմանների նկատմամբ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի իրացման հնարավորությունները պայմանավորված են պետահիշխանական միջամտության աստիճանով, ինչը հեղինակի կողմից կարևորվում է որպես տեսական-մեթոդաբանական նշանակություն ունեցող տեսակետ, ըստ որի՝ ա) այդ հնարավորությունները վերաբերում են պետական իշխանության մարմինների գործունեությանը, և իբրև հետևանք, կանխորոշում այդ մարմինների իրավասության սահմանները, ընդ որում, հետազոտության առարկա իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է օժտված լինի սահմանադրաիրավական ինքնուրույն բովանդակությամբ, բ) մարդու և քաղաքացու սահմանադրական այդ իրավունքի ապահովումն ու երաշխավորումը ոչ միայն պետության պոզիտիվ պարտականությունն է, այլև այն պարտադիր է նաև երրորդ անձանց համար, գ) պետության ու քաղաքացիական հասարակության հարաբերակցության մեջ կանխորոշվում է պետության այն հիմնական պարտականությունը, որպեսզի մարդու և քաղաքացու այդ իրավունքի իրացմամբ պայմանավորված երաշխավորվի նրա ազատությունների ճանաչումը, պահպանումն ու պաշտպանությունը:Ընդ որում, այս հիմնավորմամբ, հեղինակը գտնում է, որ՝ առանց իրավական պաշտպանության երաշխավորման նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի իրացումը չի կարող անձին ապահովել իրական ազատություն, քանի դեռ այդ իրավունքի որոշակիացումը լիարժեքորեն չի կատարվել սահմանված իրավաբանական ձևակերպման պահանջների պահպանմամբ, միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին և ՀՀ Սահմանադրությանը համապատասխան:

5) Աշխատանքում ընդհանրացնելով նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական կարգավորումների միջազգային փորձի հետազոտության և իրավական-համեմատական վերլուծության արդյունքները, հեղինակը կատարում է այն եզրահանգումը, որ քննության առարկա իրավունքն ունի ոչ հստակ կամ մակերեսային ձևակերպում, որը հետևանք է տարբեր հասկացությունների և դրանց իմաստի որոշակիացման բացակայության:Այդ իրավունքի բազմաբովանդակությունն տեղիք է տալիս տարաբնույթ մեկնաբանությունների ու իմաստավորմանը, արդյունքում, հետազոտության առարկա իրավունքին առնչվող դոկտրինալ մեկնաբանությունները ուղղված են ոչ այնքան հաղորդակցության ոլորտում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորմանը, որքան նվիրված են այդ հարաբերություններում օգտագործվող տեղեկատվության կամ հաղորդակցման տարբեր ձևերի գաղտնիության (անձեռնմխելիության) իրավական ամրագրման հարցերին:

6) Ատենախոսը օրենսդրական կարգավորումների գործընթացում անհրաժեշտ է համարում հաշվի առնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներում բացահայտված այն չափորոշիչները, ըստ որոնց հետազոտության առարկա բնագավառի վերահսկման յուրաքանչյուր միջոց կամ գործընթաց պետք է համապատասխանի օրենսդրությամբ հաստատված պայմաններին ու դատավարական կանոններին, իսկ օրենսդրական կարգավորումներն իրականացվեն օրենքի մատչելիության ու կանխատեսելիության չափանիշներին ու իրավունքի գերակայության սկզբունքին համահունչ: Այս հիմնավորմամբ, հեղինակի կարծիքով ազգային օրենսդրությամբ, այն է՝ բացառապես օրենքով պարտադիր պետք է ամրագրվեն ու երաշխավորվեն հետևյալ իրավական կանոնները. ա) հստակ սահմանել այն հանցագործությունների կազմը, որոնց քննության կապակցությամբ թույլատրվում է իրականացնել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակում, բ)հստակեցնել այդ իրավունքի սահմանափակումների տևողության սահմանները, գ) երաշխավորել և պահպանել դատարանի որոշումների հիման վրա հաղորդագրության գաղտնիության իրավունքի սահմանափակման գոյություն ունեցող պարտադիր ընթացակարգը, դ) հստակեցնել հեռախոսային խոսակցությունների ու նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկման միջոցառումների արդյունքների ուղղման, փոփոխման և այլ աղավաղումներից պաշտպանվածության եղանակները, ե) սահմանել այն հանգամանքներն ու ժամկետները, որոնց ընթացքում վերահսկման արդյունքները պետք է պահպանվեն կամ ոչնչացվեն:

7) Թեև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների նկատմամբ վերահսկողության իրականացումը դիտարկվում է որպես մարդու անձնական կյանքին միջամտության դրսևորում, այնուամենայնիվ, որոշ դեպքերում, այդ միջամտությունը օրենքով նախատեսված դեպքերում և կարգով կարող է պայմանավորված լինել հանցագործությունների դեմ պայքարի օբյեկտիվ անհրաժեշտությամբ: Ըստ այդմ, հեղինակը սահմանում է, որ ներպետական իրավական ակտերով քննարկվող իրավունքի սահմանափակում նախատեսող գործողությունների նկատմամբ նախնական դատական վերահսկողության իրականացման հնարավորությունն ինքնին պետք է դիտարկել որպես այդ իրավունքի ապահովման գործուն երաշխիք, իսկ կարևոր և լրացուցիչ երաշխիքների մասին խոսք կարող է գնալ միայն այդ իրավունքի իրացմանն ուղղված նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության իրականացման հնարավորության մասով:

8) Հեղինակի կողմից որպես համընդհանուր (ունիվերսալ) կատեգորիա գիտական շրջանառության մեջ է դրվում «հաղորդագրությունների գաղտնիք» եզրույթը՝ այն մեկի կողմից մյուսին կամ մյուսներին միջանձնյա կապի տարբեր միջոցների օգնությամբ փոխանցվող տեղեկատվության անձեռնմխելիությունն է, որը ենթադրում է այդ տեղեկատվության և հաղորդակցման փաստի՝ գաղտնիությունը, միայն այդ անձանց հասանելիությունը, պաշտպանումը ու երաշխավորումը ազգային օրենսդրությամբ, ընդ որում այդ տեղեկատվության անօրինական ձեռք բերումը, օգտագործումը, տարածումը վնաս է պատճառում (ստեղծում պատճառման սպառնալիք) գաղտնիքը տիրապետողների (սեփականատերերի) իրավունքներին և օրինական շահերին:

9) Հայաստանի Հանրապետությունում սահմանադրաիրավական կարգավորումների համատեքստում հեղինակը հիմնավոր է համարում այն մոտեցումների ամրագրման անհրաժեշտությունը, որ Սահմանադրությամբ և օրենքով նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման պայմանների և իրականացման եղանակների արդյունավետության ապահովման պարագայում անհրաժեշտ է ապահովել օրենսդրական կարգավորումների միասնականությունը՝ կատարելով օրենսդրական փոփոխություններ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքներում (ատենախոսությանը կից ներկայացվել են օրենքների նախագծերի հեղինակային տարբերակները):

Հետազոտության նորմատիվ հենքն են կազմում ՀՀ Սահմանադրությունը, օրենքները, միջազգային իրավական փաստաթղթերը, մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին մի-

ջազգային դաշնագիրը, Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան և այլն, ինչպես նաև՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներն ու դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումները:

Հետազոտության տեսական և գիտական նշանակությունը. Սույն ատենախոսական աշխատանքի տեսական-գիտական նշանակությունն այնն է, որ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի վերաբերյալ հետազոտության տեսական հետևությունները և եզրահանգումները կարող են իրենց հերթին նպաստել հետագա տեսական հետազոտությունների իրականացմանը և հարստացմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը որոշվում է նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրացման իրավունքի սահմանադրաիրավական կարգավորման ոլորտում ձևավորվող հարաբերությունների կատարելագործման անհրաժեշտությամբ:Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթները կարող են օգտագործվել նաև մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների իրացման կառուցակարգերի հետագա կատարելագործման համար:

Բացի այդ, ատենախոսության դրույթները կարող են հիմք ծառայել յուրաքանչյուր մարդու նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանադրական իրավունքի վերաբերյալ կարգավորող համապատասխան նորմատիվ իրավական ակտերի մշակման համար, ինչպես նաև հիմք ընդունվել յուրաքանչյուրի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության ոլորտում օրենսդրության կատարելագործման համար:

Հետազոտության ընթացքում ստացված եզրակացություններն ու դրանց հիման վրա ձևակերպված կիրառական առաջարկությունները թույլ են տալիս օգտագործել դրանք մարդու իրավունքների արդիական հիմնախնդիրների ուսումնասիրման գծով գիտահետազոտական աշխատանքում, ՀՀ Սահմանադրական իրավունք, Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք, Մարդու և քաղաքացու իրավունքներ ու ազատություններ և այլ դասընթացների ուսումնասիրության ժամանակ, ինչպես նաև կրթական հաստատություններում իրավաբանական ճյուղային գիտությունների, տվյալ հիմնախնդրի շուրջ դասախոսությունների և ուսումնական ձեռնարկների պատրաստման, պետական իշխանության մարմինների պրակտիկ գործունեության մեջ՝ մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ոլորտում օրենսդրության կատարելագործման ու դրա արդյունավետ կիրառման գծով:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսական աշխատանքը կատարվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի Սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնում, որտեղ քննարկվել ու գրախոսվել է: Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են թվով 6 գիտական հոդվածներում, զեկուցվել են տարբեր գիտաժողովներում:

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է հետազոտության խնդիրներով և նպատակներով: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ընդգրկում են յոթ պարագրաֆ, եզրակացությունից, հավելվածից և օգտագործված գրականության ցանկից:

II. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են ատենախոսության նպատակներն ու խնդիրները, օբյեկտն ու առարկան, գիտական նորույթն ու պաշտպանության առաջադրվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, ատենախոսության նորմատիվ, փորձառնական և մեթոդաբանական հիմքերը:

Ատենախոսության **առաջին գլուխը՝** «Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը. Տեսական-իրավական վերլուծություն» վերտառությամբ բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին՝ «Հեռախոսային խոսակցությունների ու այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի և մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի հարաբերակցության հիմնախնդիրները» ենթագլխում հեղինակը ուսումնասիրում է հեռախոսային խոսակ-

ցությունների ու այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի կապը մարդու այլ իրավունքների հետ, վերլուծում է «անձեռնամխելիություն» և «գաղտնիություն» հասկացությունները հեռախոսային խոսակցությունների ու այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի և մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի կիրառմամբ:Նրշվում է, որ հեռախոսային խոսակցությունների փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանադրական ամրագրումն ինքնին ընկալվում է որպես մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության, իրականացման կամ ապահովման երաշխիք, սակայն, այդ իրավունքը մասնավոր կյանքի անձեռնմխելիության ինստիտուտի հետ հարաբերակցության մեջ դրսևորվում է առավելապես որպես մարդու սուբյեկտիվ իրավունք, որն ապահովում է միջանձնային հաղորդակցությունների, տարբեր կապի միջոցների օգնությամբ փոխանցվող անձնական բնույթի տեղեկությունների, գաղտնիությունը և, որ ուսումնասիրվող իրավունքը մարդու մասնավոր կյանքի գաղտնիքի իրավունքն է, որն իր իրավական բնույթով մեծապես պատկանում է անձնական գաղտնիքներին, այլ ոչ թե հանրային կամ մասնագիտական գաղտնիքներին:

Երկրորդ՝ «Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի որպես անձի իրավական կարգավիճակի տարրի տեսական-իրավական հիմնահարցերը» վերտառությամբ ենթագլխում հեղինակը դիտարկելով վերոնշյալ իրավունքը որպես անձի իրավական կարգավիճակի տարր ձևակերպում է այն միտքը, որ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության յուրաքանչյուրի իրավունքը անհրաժեշտ է ընկալել որպես անհատի մասնավոր կյանքի՝ պետական իշխանության կողմից, իսկ որոշակի պայմանների դեպքում նաև երրորդ անձանցից արտաքին հակասահմանադրական միջամտությունից պաշտպանելու ու հարգելու իրավունք: Սահմանադրական կարգի պահպանումն ինքնին ենթադրում է այդ իրավունքի պաշտպանություն պետության կողմից մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ճանաչման, պահպանման ու պաշտպանության երաշխավորման համատեքստում:

Ատենախոսության **երկրորդ գլուխը՝** «Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանադրաիրավական կարգավորման միջազգային փորձը և եվրոպական չափորոշիչները» վերտառությամբ բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ վերնագրված «Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական կարգավորումները. միջազգային փորձը և համեմատական իրավական վերլուծություն» հեղինակը ներկայացրել է նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի ամրագրման յուրահատկությունները այլ երկրների Սահմանադրություններում, վերլուծելով այն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի» և այլ միջազգային իրավական ակտերի համատեքստում: Միջազգային համընդհանուր իրավական փաստաթղթերը, չնայած այն հանգամանքին, որ ուղղակիորեն չեն ամրագրում նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի մասին դրույթներ, սակայն, ըստ էության, հետազոտվող հասկացության բովանդակության բացահայտման ու որոշակիացման համատեքստում, այդ ակտերում օգտագործվող ընդհանրական հասկացությունների ամբողջականության ու իրավաընկալման հիմնահարցերը տարածական մեկնաբանությունների տեղիք են տալիս դիտարկելով «հաղորդագրություն» և «նամակագրություն» եզրույթները որպես նույնաբովանդակ հասկացություններ և մարդու մասնավոր կյանքի ու հաղորդագրության հարգելու իրավունքի տարրեր:Արտասահմանյան երկրների ազգային օրենսդրություններով հետազոտվող իրավունքը չի դիտարկվում իբրև բացարձակ իրավունք և այն կարող է սահմանափակվել օրենքին համապատասխան, եթե դա անհրաժեշտ է սահմանադրություններով նախատեսված պայմաններին համապատասխան դեպքերում:

Երկրորդ ենթագլխում՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և նրա իրավական դիրքորոշումները հեռախոսային խոսակցությունների ու այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի պաշտպանության երաշխավորման մասին» հեղինակն անդրադարձել է իրավունքի կարևոր աղբյուր հանդիսացող, քննարկվող ոլորտին վերաբերվող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների ուսումնասիրությանը: Մարդու ի-

բավունքների եվրոպական դատարանի կողմից առավել ընդհանրական են դիտարկվել Կոնվենցիայի մասնակից երկրներում հեռախոսային խոսակցությունների և այլ հաղորդակցության վերահսկելու կանոններ ամրագրելու պահանջները, որոնք, ատենախոսի կարծիքով, պարտադիր պետք է լինեն ոչ միայն ամրագրված ձևականորեն, այլև երաշխավորվեն ազգային օրենսդրությամբ:

Ատենախոսության **երրորդ գլուխը՝** «Հաղորդագրությունների գաղտնիության իրավունքի ապահովման սահմանադրական երաշխիքները և սահմանափակման սահմանադրաիրավական հիմքերը» վերտառությամբ բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ վերնագրված «Նամակագրության հեռախոսային խոսակցությունների, փոստային հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունն ու իրացման հիմնախնդիրները» նշված իրավունքը դիտարկվում է որպես մի մարդուց մյուսին/մյուսներին միջանձնյա շփման տարբեր միջոցների օգնությամբ միայն այդ անձանց հայտնի լինելը ենթադրող տեղեկատվության, ազգային օրենսդրությամբ պաշտպանվող ու երաշխավորվող փոխանցելու հնարավորություն: Այդ տեղեկատվության անօրինական ձեռք բերումը, օգտագործումը, տարածումը վնաս է պատճառում (ստեղծում պատճառման սպառնալիք) գաղտնիքը տիրապետողների (սեփականատերերի) իրավունքներին և օրինական շահերին:

Երկրորդ ենթագլխում՝ վերնագրված «Մարդու և քաղաքացու հաղորդագրությունների գաղտնիության իրավունքը. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և ապահովման սահմանադրաիրավական երաշխիքները» հեղինակը շեշտում է քննարկվող իրավունքի սահմանադրական երաշխիքները՝ այդ իրավունքի գերակայության առաջնայնության ճանաչումը, այն պետության համար իշխանության իրականացման սահմանափակիչ ներկայանալը, այդ իրավունքի անմիջական գործողության սահմանումը, այդ իրավունքի բացառապես օրենքով սահմանափակման իրավակարգավորումը և այլն:

Երրորդ ենթագլխում՝ վերնագրված «Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման սահմանադրաիրավական հիմքերը» հեղինակը հետազոտության է ենթարկում ոլորտը կարգավորող օրենսդրությունը, մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի դրույթները, Սահմանադրությանը և միջազգային նորմերին համապատասխանության տեսանկյունից:

Եզրակացության մեջ ընդհանրացված կերպով ներկայացվում են ատենախոսական հետազոտության հիմնական արդյունքներ.

1) Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանադրական ամրագրումն ինքնին ընկալվում է որպես մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության, իրականացման կամ ապահովման երաշխիք: Այդ իրավունքը մասնավոր կյանքի անձեռնմխելիության ինստիտուտի հետ հարաբերակցության մեջ դրսևորվում է առավելապես որպես մարդու սուբյեկտիվ իրավունք, որն ապահովում է միջանձնային հաղորդակցությունների, տարբեր միջոցների օգնությամբ փոխանցվող անձնական բնույթի տեղեկությունների գաղտնիությունը:

Միաժամանակ, այն իր իրավական բնույթով մեծապես պատկանում է անձնական գաղտնիքներին, այլ ոչ թե հանրային կամ մասնագիտական գաղտնիքներին և նրան անհրաժեշտ է ընկալել որպես անհատի մասնավոր կյանքը պետական իշխանության կողմից, իսկ որոշակի պայմանների դեպքում նաև երրորդ անձանցից արտաքին հակասահմանադրական միջամտությունից պաշտպանելու ու հարգելու իրավունք, որի ճանաչումը, պահպանումն ու պաշտպանությունը երաշխավորվում է պետության կողմից:

2) Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի իրացման երաշխիքներում արտահայտվում է սահմանադրական կարգի էական կողմը, այն է, որ նշված իրավունքի պաշտպանության իրականացումն ունի միայն դրական բովանդակություն, քանի որ օգտագործվում է իրավաչափ վարքագիծը՝ իբրև անհատի ազատ ու հասարակության առջև պատասխանատու կյանքի իրացման ձևի պաշտպանություն: Այդ առումով տվյալ իրավունքի իրականացմանը խոչընդոտող ցանկացած հակաիրավական գործողություն կարող է հիմք հանդիսանալ մարդու և քաղաքացու ազատության իրավունքի սահմանափակմանը:

3) «Անձնական կյանքի անձեռնմխելիություն» և «անձնական կյանքի գաղտնիք» հասկա-

ցությունների իրավաընկալման հիմնախնդիրներն ունեն տարբեր իմաստ: Այսպես, եթե առաջինն ընկալվում է որպես որոշակի որակական վիճակ, որը բնութագրվում է մասնավոր կյանքի հարցերի ինքնուրույն լուծման հնարավորությամբ, ապա երկրորդը բովանդակում է մարդու մասին որոշակի տեղեկությունների այն շրջանակը, որոնք չեն առնչվում անձի մասնագիտական կամ հասարակական գործունեության հետ, ընդ որում, անձն ինքն է որոշում, պահպանել գաղտնիքը, թե փոխանցել այն ուրիշին: Պետության խնդիրն է երաշխավորել ու ապահովել այդ թվում անձի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիքի պահպանումը և պաշտպանությունը: Այս հիմնավորմամբ «անձնական կյանքի անձեռնմխելիություն» և «անձնական կյանքի գաղտնիք» հասկացությունները գործնական կիրառմամբ չեն կարող խաչվել կամ սերտաճել մեկը մյուսի նկատմամբ, ի վերջո, խնդիրն այն է, որպեսզի թույլ չտրվի այն տեղեկության հրապարակումը, որով փոխանակվում են մարդիկ, իսկ այդպիսի հրապարակումը թույլ չտալու միակ եղանակն է անձեռնմխելի հայտարարել այդպիսի տեղեկատվությունը:

4) «Գաղտնիքն» ու «անձեռնմխելիությունը» իրար փոխլրացնող հասկացություններ են, սակայն, հետազոտման առարկա ոլորտի հարաբերություններում ավելի ճիշտ ու հստակ է օգտագործել «գաղտնիք» եզրույթը, քան «անձեռնմխելիություն», եզրույթը, քանի որ գաղտնիքի միջոցով է թաքցվում նաև կապի տարբեր միջոցների օգնությամբ իրականացվող միջանձնային հաղորդակցության փաստերը , այլ ոչ միայն նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների բովանդակությունը, որը անձեռնմխելի է այլ անձանց համար:Այդ հիմնավորմամբ պայմանավորված,հարկ է կարևորել,որ արդարացված է տարբեր տեսակի գաղտնիքների և սահմանադրական, և օրենսդրական պաշտպանությունը: Այդ հիմնավորմամբ, մասնավոր (անձնական) կյանքի իրավունքի գաղտնիքը, մի կողմից, անձի անձնական իրավունքն է սեփական կենսակերպը սահմանելու, ինչպես նաև անձի մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկությունը պահպանելու ու պաշտպանելու կապակցությամբ, իսկ մյուս կողմից, այն կառուցվածքային տարրերի համակարգ է, որի բաղկացությունն է կազմում նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը: Այստեղից, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության սահմանադրական իրավունքը յուրաքանչյուր մարդու ինքնուրույն սուբյեկտիվ իրավունքն է և միաժամանակ, մասնավոր կյանքի անձեռնմխելիության ինստիտուտի բաղկացուցիչ տարր՝ միջանձնային հաղորդակցությունների և տարբեր միջոցների օգնությամբ փոխանցվող անձնական բնույթի տեղեկությունների գաղտնիությունն ապահովելու առնչությամբ:

5) Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանադրական ամրագրումն ինքնին ընկալվում է որպես մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության, իրականացման կամ ապահովման երաշխիք, սակայն, այդ իրավունքը մասնավոր կյանքի անձեռնմխելիության ինստիտուտի հետ հարաբերակցության մեջ դրսևորվում է առավելապես որպես մարդու սուբյեկտիվ իրավունք, որն ապահովում է միջանձնային հաղորդակցությունների և տարբեր միջոցների օգնությամբ փոխանցվող անձնական բնույթի տեղեկությունների գաղտնիությունը, և այդ իրավունքն իր իրավական բնույթով մեծապես պատկանում է անձնական գաղտնիքներին, այլ ոչ թե հանրային կամ մասնագիտական գաղտնիքներին:

6) Մարդու և քաղաքացու անձնական ազատության սահմանների նկատմամբ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի իրացման հնարավորությունները պայմանավորված են պետահիշխանական միջամտության աստիճանով, ինչը մի շարք մեթոդաբանական մոտեցումների ու պարզաբանումների տեղիք է տալիս: Այսպես ա) դա վերաբերում է պետական իշխանության մարմինների գործունեությանը, և իբրև հետևանք՝ կանխորոշում է այդ մարմինների իրավասության սահմանները, ընդ որում՝ ցանկացած այդպիսի սահմանափակում պետք է օժտված լինի սահմանադրաիրավական ինքնուրույն բովանդակությամբ: Դրա հետ մեկտեղ հարկավոր է հաշվի առնել, որ ազատության և իշխանության հարաբերակցության համատեքստում անձի ազատության ու հավասարության կարգավիճակը՝ իբրև բարձրագույն արժեքներ, ընդհանուր առմամբ ճանաչվում են այդպիսին՝ անկախ պետական իշխանության գործունեությունից կամ վարքագծից: Այդ իմաստով մասնավոր

կյանքի անձեռնմխելիության հարցերի իրավական կարգավորումն ուղղված է ոչ թե անձի ազատության վերացմանը կամ սահմանափակմանը,այլ այդ իրավունքի իրացմանը:բ) Սահմանադրական իրավունքների ու ազատությունների ապահովումն ու երաշխավորումը պարտադիր է ոչ միայն պետության, այլև երրորդ անձանց համար: Սակայն, վերջիններիս օրենքով սահմանված պարտականությունների շրջանակներն անմիջականորեն կապված են այդ անձանց սուբյեկտիվ իրավունքների հետ: Տվյալ մոտեցումը հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական այն դիրքորոշման վրա, ըստ որի՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (հոդվ. 8) պարտադրում է ոչ միայն պետություններից ձեռնարկել քայլեր, որոնք պետք է ուղղված լինեն առանձին մարդուն իր հաղորդագրության գաղտնիության իրավունքի նկատմամբ իրական հարգանքն ապահովելուն, այլև պահանջել պաշտպանել այդ իրավունքի իրականացումը ոչ իրավաչափ գործողություններով խոչընդոտող անձանցից:գ) Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը իբրև սուբյեկտիվ իրավունք իր որոշակիացումն է ստացել առանձին իրավական կարգավորումներում, մասնավորապես, «Փոստային կապի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Տեղեկատվության ազատության մասին, «Օպերատիվ-հետախուզական գործնեության մասին» և այլ ՀՀ օրենքներում: Հենց այս օրենսդրական կարգավորումների շրջանակում անձի իրավական կարգավիճակը համալրվում է որոշակի առարկայական բովանդակությամբ ու ապահովում համապատասխան սահմանադրական երաշխիքներով:դ) ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի բովանդակությունից միաժամանակ բխում է, որ հետազոտության առարկա իրավունքը պետք է դիտարկել միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի համատեքստում, որն օրենսդրական կարգավորման է ենթարկվում Սահմանադրությանը համապատասխան՝ սահմանվելով իբրև անձի ազատության իրացման հիմնական երաշխիք:Ելնելով սահմանադրական վերոնշված դրույթների համակարգային վերլուծությունից անհրաժեշտ է նշել, որ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքներն ու նորմերը նույնպես փոխկապված են մարդու ու քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների հետ, ինչը ենթադրում է, որ պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովելու այդ իրավունքի պետաիրավական պաշտպանությունը:ե) Մարդու և քաղաքացու անձնական սահմանադրական իրավունքների ու ազատությունների միջոցով բացահայտվում է սահմանադրական կարգի ու իրավակարգի հիմնական արժեքային համակարգը ու դրա մարդասիրական բնույթը: Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը պետության ու քաղաքացիական հասարակության հարաբերակցության մեջ երաշխավորվում է պետության այն հիմնական պարտավորությամբ, որ մարդու և քաղաքացու այդ իրավունքի իրացմամբ պայմանավորված երաշխավորվում է նրա ազատությունների ճանաչումը, պահպանումն ու պաշտպանությունը:

Այսպիսով, մեթոդաբանական այս մոտեցումների համադրված վերլուծությունից անհրաժեշտ է կանխորոշել, որ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքն ու դրա ապահովման երաշխիքները հանդիսանում են անձի իրավական կարգավիճակի ու համապատասխանաբար սահմանադրական կարգի բովանդակային հիմքերից մեկը:

7) Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանադրական, միջազգային իրավական կարգավորումների և միջազգային փորձի հետազոտության ու իրավական-համեմատական վերլուծության արդյունքները վկայում են. ա) Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (հոդ.12), ՄԱԿ-ի Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին դաշնագիրը (հոդ.17), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (հոդվ.8) և միջազգային համընդհանուր իրավական այլ փաստաթղթերը, չնայած այն հանգամանքին, որ ուղղակիորեն չեն ամրագրում նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի մասին դրույթներ, սակայն, ըստ էության, ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասի շրջանակներում դիտարկվող հասկացության բովանդակության բացահայտման ու որոշակիացման համատեքստում, այդ ակտերում օգտագործվում են ընդհանրական հասկացություններ, որոնց ամբողջականության ու իրավաբնկալման հիմնահարցերը տարածական մեկնաբանությունների տեղիք են տալիս դի-

տարկելով «հաղորդագրություն» և «նամակագրություն» եզրույթները որպես նույնաբովանդակ հասկացություններ և մարդու մասնավոր կյանքի ու հաղորդագրության հարգելու իրավունքի տարրեր։բ) արտասահմանյան երկրների ազգային օրենսդրություններով նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը չի դիտարկվում իբրև բացարձակ իրավունք և այն կարող է սահմանափակվել օրենքին համապատասխան, եթե դա անհրաժեշտ է սահմանադրություններով նախատեսված պայմաններին համապատասխան դեպքերում։ գ) տարբեր երկրների սահմանադրական և միջազգային իրավական կարգավորումների զարգացումների շրջանակում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը դիտարկվում է հարակից իրավունքների հետ հարաբերակցության մեջ, որպեսզիք են հանդիսանում՝անձի անձեռնմխելիության իրավունքը, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, պատվի ու արժանապատվության հարգման իրավունքը, հաղորդագրության անձեռնմխելիության իրավունքը։դ) Արևելյան Եվրոպայի, այդ թվում հետսոցիալիստական երկրների սահմանադրությունները շատ ավելի մանրամասնորեն են կարգավորում հենց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, իսկ մեծամասնությունում անգամ կատարվում է բաժանում մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, հաղորդագրությունների գաղտնիության իրավունքից։ Իսկ Արևմտյան Եվրոպայի երկրների հիմնական օրենքներում բացակայում են մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը սահմանող կարգավորումները, սակայն, առանձին իրավակարգավորումների շրջանակում նախատեսվում են, մասնավորապես, փոստային կապի կամ հաղորդագրության գաղտնիության իրավունքն ու քաղաքացու նկատմամբ տեղեկատվություն հավաքելու արգելքը սահմանող նորմեր։

Նման սահմանադրական տարբեր կարգավորումների առկայությունը նաև պայմանավորված է. ա) միջազգային իրավական ակտերում նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի ոչ հիստակ կամ մակերեսային ձևակերպումներով, ինչի հետևանք է տարբեր հասկացությունների և դրանց իմաստի բովանդակային անորոշության առկայությունը, բ) դիտարկվող իրավունքի բազմաբովանդակությամբ, որը տեղիք է տալիս դրանց տարաբնույթ մեկնաբանությունների ու իմաստավորմանը և արդյունքում ստացվում է, որ դրանց դոկտրինալ մեկնաբանությունները ուղղված են ոչ այնքան հաղորդակցության ոլորտում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորմանը, որքան նվիրված են այդ հարաբերություններում օգտագործվող տեղեկատվության կամ հաղորդակցման տարբեր ձևերի գաղտնիության (անձեռնմխելիության) իրավական ամրագրման հարցերին։

8) Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ազգային օրենսդրական կարգավորումների գործընթացում։ Դրանք են՝՝ տվյալ բնագավառում հսկողության յուրաքանչյուր գործընթաց պետք է համապատասխանի օրենսդրությամբ հաստատված պայմաններին ու դատավարական կանոններին, իսկ օրենքը պետք է համապատասխանի մատչելիության ու կանխատեսելիության չափանիշներին ու իրավունքի գերակայության սկզբունքին և այլն։ Այս հիմնավորմամբ, հեղինակի կարծիքով ազգային օրենսդրությամբ բացառապես օրենքով պարտադիր պետք է ամրագրվեն ու երաշխավորվեն հետևյալ կանոնները. ա) հստակ սահմանել այն հանցագործությունների կազմը, որոնց քննման կապակցությամբ թույլատրվում է իրականացնել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակում, բ) հստակեցնել այդ իրավունքի սահմանափակումների տևողության սահմանները, գ) երաշխավորել և պահպանել դատարանի որոշումների հիման վրա հաղորդագրության գաղտնիության իրավունքի սահմանափակման գոյություն ունեցող պարտադիր ընթացակարգը, դ) հստակեցնել վերահսկման (գաղտնալսումների) արդյունքների ուղղման, փոփոխման և այլ աղավաղումներից պաշտպանվածության եղանակները, ե) սահմանել այն հանգամանքներն ու ժամկետները, որոնց ընթացքում վերահսկման արդյունքները պետք է պահպանվեն կամ ոչնչացվեն։

9) Դիտարկելով նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության յուրաքանչյուրի իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունն ու սահմանները անհրաժեշտ է նկատի ունենալ, որ՝

ա) Ազգային օրենսդրության զարգացման միտումները վկայում են այն մասին, որ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների բովանդակությունը համապատասխանում է նամակագրության միջազգային-իրավական հասկացությանը, իսկ նոր խմբագրությամբ «Փոստային կապի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքների ընդունումը ցույց է տալիս կապի ոլորտում հասարակական հարաբերությունների պարզ ու հստակ ձևակերպման ու կարգավորման անհրաժեշտությունը: ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասում նշված շփման այնպիսի եղանակները, ինչպիսիք են նամակագրությունը, հեռախոսային խոսակցությունները, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները որոշակիացնում են «նամակագրություն» հասկացությունը՝ դրա միջազգային իրավական ժամանակակից ընկալմամբ: բ)ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի հետ մեկտեղ պատկանում է մարդու և քաղաքացու հիմնական սահմանադրական իրավունքների ու ազատությունների կատեգորիային: գ)Մասնագիտական գրականության մեջ, ազգային ու միջազգային օրենսդրության մեջ տեղ են գտել մի շարք հասկացություններ, որոնք գործածվում են միևնույն բովանդակության, սակայն տարբեր հասկացությունների՝ փոստային - էլեկտրոնային կապի այս կամ այն ձևերը նշելու միջոցով: Գաղտնիքը, գաղտնիությունը, անձեռնմխելիությունը տարբեր հասկացություններ են, սակայն տվյալ դեպքում բոլորն ունեն ընդհանուր նշանակություն, այն է՝ միջանձնյա հաղորդագրությունների տարբեր ձևերի (նամակագրություն, հեռախոսային խոսակցությունը, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներ) օգնությամբ փոխանցվող հրապարակմանը ոչ ենթակա տեղեկություն: դ) ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 5-րդ մասում նախատեսված կապի տարբեր ձևերով փոխանցվող տեղեկատվությունը (նամակագրություն, հեռախոսային խոսակցություններ, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներ) ավելի լայն բովանդակություն ունեցող «հաղորդագրություն» եզրույթի բաղկացուցիչ մասերն են:

Հաղորդագրությունը՝ մեկի կողմից ուրիշին կամ ուրիշներին միջանձնյա շփման տարբեր միջոցների օգնությամբ փոխանցվող, ազգային օրենսդրությամբ պահպանվող ու երաշխավորվող, ֆիզիկական անձանց կյանքի տարբեր ոլորտներին վերաբերվող, միայն այդ անձանց իր հայտնի լինելը ենթադրող տեղեկություն է: Այդ իմաստով, «հաղորդում» եզրույթի նկատմամբ «հաղորդագրություն» եզրույթն ունի ավելի լայն բովանդակություն: Չի կարող անձնական հաղորդագրության գաղտնիք համարվել այն տեղեկատվությունը, որը ներառված է իրավաբանական անձանց, պետական մարմինների հաղորդագրության մեջ: Նաև դիտարկվող գաղտնիքը բացակայում է մի կողմից մասնավոր անձանց, և մյուս կողմից իրավաբանական անձանց, պետական մարմինների միջև փոխանակվող հաղորդագրության մեջ:

10) Գիտական շրջանառության մեջ է մտցվում «հաղորդագրությունների գաղտնիք» եզրույթը՝ այն մեկի կողմից մյուսին կամ մյուսներին միջանձնյա կապի տարբեր միջոցների օգնությամբ փոխանցվող տեղեկատվության անձեռնմխելիությունն է, որը ենթադրում է այդ տեղեկատվության և հաղորդակցման փաստի՝ գաղտնիությունը, միայն այդ անձանց հասանելիությունը, պաշտպանումը ու երաշխավորումը ազգային օրենսդրությամբ, ընդ որում այդ տեղեկատվության անօրինական ձեռք բերումը, օգտագործումը, տարածումը վնաս է պատճառում (ստեղծում պատճառման սպառնալիք) գաղտնիքը տիրապետողների (սեփականատերերի) իրավունքներին և օրինական շահերին:

Հաղորդագրությունների գաղտնիքի բովանդակությունը, մեր կարծիքով, կազմում են. ա) փոստային, հեռագրական, հեռախոսային և այլ (այդ թվում նաև էլեկտրոնային փոստի օգտագործմամբ) կապի միջոցներով փոխանցվող հաղորդագրությունների բովանդակությունը, բ) տեղեկություն հաղորդակցվող ֆիզիկական անձանցիրենց գտնվելու վայրի և այլն մասին, գ) տեղեկություններ այդ անձանց անունով հաղորդագրության առկայության կամ բացակայության մասին, ինչպես նաև այլ տեղեկություն իրենց անձնական հաղորդագրությունների մասին:

11) Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների նկատմամբ վերահսկողության իրականացումը մարդու անձնական կյանքին միջամտության դրսևորումներից է, սակայն, երբեմն, այդ միջամտությունը օրենքով նախատեսված դեպքերում և կարգով կարող է պայմանավորված լինել հանցագործու-

թյունների դեմ պայքարի օբյեկտիվ անհրաժեշտությամբ: Ըստ այդմ, ներպետական իրավական ակտերով քննարկվող իրավունքի սահմանափակում նախատեսող գործողությունների նկատմամբ նախնական դատական վերահսկողության իրականացման հնարավորությունն ինքնին ընկալվում է որպես այդ իրավունքի ապահովման գործուն երաշխիք: Տվյալ դեպքում կարևոր և լրացուցիչ երաշխիքային նշանակություն ունի հենց այդ իրավունքի իրացմանն ուղղված նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության իրականացման հնարավորությունը՝ դատախազին օրենքով վերապահված լիազորությունների սահմաններում:

Այդ առումով սահմանադրահիրավական երաշխիքները ունեն էական սոցիալական ու արժեբանական նշանակություն, քանի որ՝ ա) դրանք ապահովում են նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի իրագործման իրական հնարավորություն, բ) դրանք դիտարկվում են որպես մարդու և քաղաքացու հիմնական իրավունք, ինչը նաև սոցիալական արժեբանական նշանակություն է հաղորդում վերջինիս և, գ) պետությունը պարտավորվում է ապահովել այդ իրավունքի իրացումը միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան:

12) Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական գործընթացների համատեքստում անհրաժեշտ է նախատեսել դրույթներ՝ ա) այն իրավունքների վերաբերյալ, որոնք որևէ կերպ սահմանափակման ենթակա չեն, բ) այն իրավունքների վերաբերյալ, որոնց սահմանափակման շրջանակն ու կարգը սահմանվում են բացառապես Սահմանադրությամբ, գ) օրենքով սահմանափակվող իրավունքների սահմանափակման պայմանների և իրականացման եղանակների վերաբերյալ, դ) արտակարգ իրավիճակներում իրավունքների սահմանափակման սահմանների, կարգի ու ժամկետների վերաբերյալ:

13) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առաջարկվում է կատարել հետևյալ լրացումները. ա)սահմանել նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակում նախատեսող քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման միանման երկու ամիս տևողության ժամկետը, վերացնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի միջև առկա ժամկետային հակասությունը, բ) «Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում» քննչական գործողության կարգը սահմանող ՀՀ քրեական դատավարության 239-րդ հոդվածից առաջարկվում է հանել «կալանք դնել» եզրույթը և նախատեսել, որ նշված քննչական գործողությունը ինչպես և «հեռախոսային խոսակցությունների լսելը» քննչական գործողության կատարումը հանձնարարվում է նմանատիպ օպերատիվ-հետախուզական միջոցառումների օպերատիվ-տեխնիկական պայմանները ստեղծող «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված մարմնին, գ) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում առաջարկվում է նախատեսել դրույթ, ըստ որի՝ օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը հեռախոսային համարի և էլեկտրոնային հասցեի փոխարեն, կամ միևնույն ժամանակ, կարող է պարունակել նաև կապի միջոցի եզակի տեխնիկական հատկանիշ, էլեկտրոնային հաղորդակցության ցանցում դիրքը բնութագրող տվյալ կամ այլ պարամետր, դ) «Օպերատիվ–հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածում «հեռախոսային խոսակցությունների վերահսկում» եզրույթի սահմանումից առաջարկվում է հանել «կարճ հաղորդագրություններ (sms), ինտերնետի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդումներ (բացառությամբ ինտերնետային հեռախոսային խոսակցությունների) կապի տեսակներ» և դասել դրանք «այլ հաղորդումներ» հասկացության շարքում, ներառելով 25-րդ հոդվածում տրված «նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման սահմանման մեջ: Նույն 25-րդ հոդվածի սահմանման մեջ առաջարկվում է հստակեցնել, որ «նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում» օպերատիվ–հետախուզական միջոցառումն իրականացվում է գաղտնի եղանակով, ինչպես այդ նախատեսված է «հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ–հե-

տախուզական միջոցառման սահմանման մեջ, ե) «Օպերատիվ–հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 9, 31 և 32-րդ հոդվածներում առաջարկվում է կատարել փոփոխություններ, ըստ որոնց, «նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը ապահովումը է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի համակարգում գործող «հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման օպերատիվ-տեխնիկական պայմանները ստեղծող ստորաբաժանումը, այդ օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու իրավասություն ունեցող մարմինների միջնորդության հիման վրա (դատարանի համապատասխան որոշման առկայության պարագայում):

14) Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակումը կարող է տեղի ունենալ նաև արտակարգ դրության ժամանակ, սակայն օրենսդիրը մինչ օրս չի նախատեսել այդպիսի հնարավորություն, քանի որ դիտարկվող իրավունքի սահմանափակման հնարավորությունը չի քննարկվում «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում: Ապագայում արտակարգ դրության վերաբերյալ օրենսդրության բազան վերանայելիս այդ բացը պետք է լրացվի, ինչպես նաև որոշակիացվեն նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակումները նաև «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում՝

1. «Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը որպես անձի իրավական կարգավիճակի տարր»// ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոն.Գիտական հոդվածների ժողովածու 2014 թ. Երևան , էջեր 39-43,
2. «Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի իրավական կարգավորումը. միջազգային փորձը և համեմատական իրավական վերլուծություն»//Արդարադատություն. Երևան,2014,N4(27),էջեր 60-64,
3. «Մարդու և քաղաքացու հաղորդագրությունների գաղտնիության իրավունքը: Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը և ապահովման սահմանադրահիրավական երաշխիքները»// РАУ Восьмая годичная научная конференция. Сборник научных статей**:** Ереван, 2014. էջեր 88-94**,**
4. «Հեռախոսային խոսակցությունների ու այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի և մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի հարաբերակցության հիմնախնդիրները.Տեսական-իրավական վերլուծություն»//Вестник РАУ.Гуманитарные и общественные науки.(18)РАУ N3 2014 г.Ереван, էջեր 4-15,
5. «Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի ապահովման սահմանադրահիրավական երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում»//Եվրոպական ակադեմիայի գիտական հոդվածների ժողովածու.Երևան, 2014, էջեր 120-124,
6. «Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման հիմքերը սահմանադրական կարգավորումների և միջազգային իրավունքի նորմերի համատեքստում»//Եվրոպական ակադեմիայի գիտական հոդվածների ժողովածու 2014 թ. Երևան, էջեր 125-129 :

АПОЯН РУБЕН ЛЕВОНОВИЧ

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ АСПЕКТЫ ОХРАНЫ ПРАВА ЧЕЛОВЕКА И ГРАЖДАНИНА НА ТАЙНУ ТЕЛЕФОННЫХ ПЕРЕГОВОРОВ И ИНЫХ ВИДОВ КОММУНИКАЦИЙ

Диссертации на соискание ученой степени кардидата юридических наук по специальности 12.00.02 «Публичное право»

Защита диссертации состоится 16 марта 2015г. в 16:00 на заседании специализированного совета ВАК 041 по юриспруденции Академии государственного управления РА (0028, Ереван-28, ул. Киевян 8)

Р Е З Ю М Е

Диссертационная работа на сооискание ученой степени кандидата юридических наук посвящена всестороннему изучению и анализу проблем конституционных гарантий и правовой охраны права гражданина и человека на тайну переписки, телефонных переговоров, почтовых, телеграфных и иных сообщений, закрепленного в статье 23 часть 5 Конституции Республики Армения.

Основные вопросы института охраны права личности на тайну переписки, телефонных переговоров, почтовых, телеграфных и иных сообщений широко освещены в трудах российских и западных ученых. В тоже время, в Республике Армения данные вопросы изучались только в общей системе основных прав и свобод человека и гражданина и конкретизировались лишь в комментариях Конституции.В этом смысле данная работа является первой попыткой в отечественной юридической науке, на теоретическо-практическом уровне комплексно и всесторонне осуществить исследование вопросов защиты прав и законных интересов гражданина и человека в области права на тайну переписки, телефонных переговоров, почтовых, телеграфных и иных сообщений и анализ гарантий их обеспечения.

Целью работы является изучение и анализ основополагающих вопросов гарантии, особенностей осуществления и путей совершенствования действенной защиты права на тайну переписки, телефонных переговоров, почтовых, телеграфных и иных сообщений в рамках конституционо-правового регулирования в Республике Армения.

Рассматривая теоретические вопросы соотношения права на тайну телефонных переговоров и других сообщений с правом на неприкосновенность частной жизни и другими правами человека, анализируются понятия «непркосновенности» и «тайны» применительно к вышеназванным правам. При этом делается вывод что конституционное закрепление права на тайну переписки, телефонных переговоров, почтовых, телеграфных и иных сообщений само собой воспринимается как гарантия защиты, осуществления и обеспечения права на неприкосновенность частной жизни.Вместе с тем это право в соотношении с институтом неприкосновенности частной жизни проявляется в основном, как субъективное право человека, которое обеспечивает тайну межличностного сообщения - информации личного характера передаваемой с использованием различных средств связи.Рассматривоемое право является правом на тайну личной жизни, которое в своем правовом выражениии относится к частной, а не общественной или же профессиональной тайне.

Рассматривая вышеназванное право в качестве элемента правового статуса личности, автором делается вывод о том, что названное право необходимо воспринимать в качестве права на уважение частной жизни человека государством и его защиту от незаконных посягательств, в том числе со стороны третьих лиц.Обеспечение конституционного порядка подразумевает защиту этого права государством в контексте гарантии признания, обеспечения и защиты прав человека и гражданина.

Автор, осуществляя анализ особенностей закрепления права на тайну переписки, телефонные переговоры, почтовых и иных сообщений в Конституциях зарубежных стран в свете положений европейской конвенции «О правах человека» и других международных юридических актов, приходит к выводу, что, хотя общепризнанные международно-правовые документы буквально не фиксируют положения права на тайну переписки, телефонных переговоров, почтовых, телеграфных и иных сообщений, однако, в контексте выявления и определения существа рассматриваемого понятия, употребляемые в них обобщенные понятия дают основание на расширенное толкование рассматривая термины «переписка» и «сообщения» в качестве одинаковых по содержанию понятий и элементов права на уважение частной жизни и тайну переписки, телефонных переговоров, почтовых, телеграфных и иных сообщений.

Диссертантом рассматривается право на тайну переписки, телефонных переговоров, почтовых, телеграфных и иных сообщений, как защищаемая и гарантируемая государством возможность передачи посредством различных средств межличностного сообщения одним лицом другому или другим личных данных, доступ к которым предусмотрен только для этих лиц. Незаконное получение, использование, распространение этих данных наносят ущерб или создают угрозу нанесения ущерба правам и законным интересам владельцев. Автором подчеркиваются конституционные гарантии защиты рассматриваемого права: признание приоритета его верховенства, ограничительного характера при осуществлении государственной власти, возможности его ограничения исключительно на основании закона и прочее.

Учитывая, что в законодательстве зарубежных стран исследуемое право не рассматривается в качестве абсолютного права и если это необходимо может быть ограничено на основе и в соответсвиии с положениями закона в случаях предусмотренных в Конституции, как важный источник права исследуются решения Европейского Суда по правам человека относящиеся к данной области. Европейским Судом по правам человека наиболее полно рассмотрены требования по закреплению правил в отношении контроля телефонных переговоров и иных сообщений в странах – участницах Конвенции, которые по мнению диссертанта дожны быть закреплены не только формально, но и учтены в национальном законодательстве.

В связи с этим автором исследуется на предмет соответствия международным нормам регулирующее данную областъ законодательство, в частности Уголовно-процессуальный кодекс РА и Закон РА «Об оперативно-розыскной деятельности», даются конкретные предложения по законодательным изменениям, что позволит создать дополнительные гарантии конституционно-правовой защиты права человека и гражданина на тайну переписки, телефонных переговоров, почтовых, телеграфных и иных сообщений.

RUBEN L. APOYAN

CONSTITUTIONAL AND LEGAL ASPECTS OF THE PROTECTION OF THE RIGHTS OF HUMAN AND CITIZEN ON THE CONFIDENTIALITY OF TELEPHONE CONVERSATIONS AND OTHER TYPES OF TELECOMMUNICATIONS

Dissertation for the degree of Doctor of Philosophy /Ph.D/ in Lawon the specialization of 12.00.02 "Public law"

The defense of the dissertation will be held on1 March 2015, 16:00 at the session of the Specialized Council 041 on jurisprudence of SQC RA at the public administration akademy of the Repablic of Armenia

SUMMARY

The thesis paper is devoted to the comprehensive study and analysis of the problems of constitutional guarantees and legal protection of a human's and a citizen's rights to privacy of correspondence, telephone conversations, postal, telegraph and other communications, fixed in the Constitution of the Republic of Armenia, article 23, part 5.

The main issues of the institute for protection of induividual rights to privacy of correspondence, telephone conversations, postal, telegraph and other communications are widely illustrated in the works of Russian and Western scientists. At the same time, in the Republic of Armenia these issues have been studied only in the general system of the fundamental rights and freedoms of a human and a citizen and have been specified only in the comments of the Constitution. In this sense, this paper is the first attempt in the domestic legal science on the theoretical-practical level to study comprehensively and thoroughly the protection of rights and legitimate interests of a citizen and a human in the frame of the right to privacy of correspondence, telephone conversations, postal, telegraph and other communications and to analyze of the guarantee of their implementation.

The aim of this paper is to study and analyze the fundamental issues of guarantees, the specifics of implementation and the ways to improve the effective protection of the right to privacy of correspondence, telephone conversations, postal, telegraph and other communications within the constitutionally legal regulations of the Rebublic of Armenia.

Considering the theoretical aspects of the correlation between the right to privacy of telephone conversations and other communications and the right of personal privacy and other rights of a human, the concepts "privacy" and "secrets" are analyzed with respect to the above-mentioned rights. In this case, we come to a conclusion that the constitutional recognition of the right to privacy of correspondence, telephone conversations, postal, telegraph and other communications is by itself perceived as a guarantee of the protection, implementation and enforcement of the right to the personal privacy. However, this right in relation to the institute of the personal privacy is mainly manifested as a subjective right of a person, which ensures the secrecy of interpersonal communication - private information transmitted through various means of communication.

Considering the right to privacy of correspondence, telephone conversations, postal, telegraph and other communications as an element of the legal status of an individual, the author comes to the conclusion that the mentioned right must be perceived as a right to

respect for a human's personal privacy by the state and its protection from illegal encroachments infringements, including those by the third party. Ensuring the constitutional order implies the protection of this right by the state in the context of the guarantees of recognition, enforcement and protection of a human's and citizen's rights.

The author, performing a deep analysis of features providing the rights to privacy of correspondence, telephone conversations, postal, telegraph and other communications in the constitutions of foreign countries in the light of the provisions of the European Convention on "Human Rights" and other international legal acts, comes to the conclusion that although universally accepted legal documents do not fix litartly the provisions of the right to privacy of correspondence, telephone conversations, postal, telegraph and other communications, but in the context of identifying and defining the essence of the stadidconcepts, general concepts used in them provide a basis for considering a broader interpretation of the terms "correspondence" and "messages" the same as the content of concepts and elements of the right to respect for personal privacy and privacy of correspondence, telephone conversations, postal, telegraph and other communications.

The author considers the right to privacy of correspondence, telephone conversations, postal, telegraph and other communications as a protected and guaranteed by the state possibility to transfer personal information from one person to another or other by various means of interpersonal communications, access to which is provided only for those persons. Illegal receipt, use and dissemination of these data damage or pose a threat to damage the rights and the legitimate interests of the owners. The author emphasizes the constitutional guarantees for the protection of the considered rights: the recognition of the priority of its rule, the limiting features in the implementation of the state authority, the possibility to limit solely on the basis of the law and so forth.

Taking in to acount the fact that the right to privacy of correspondence, telephone conversations, postal, telegraph and other communications in the legislation of foreign countries is not considered as an absolute right and if necessary may be limited on the basis of and in accordance with the provisions of the law of cases stipulated in the Constitution, the decisions of European Court on human rights related to this field are examined as an important source of law. The European Court of human rights more thoroughly considered the requirements for consolidation rules in relation to monitoring of telephone conversations and other communications in the countries - participants of the convention, which, in the autor's opinion, must not only be secured formally, but also must be accounted for the national legislation. In this regard, the author investigates the legislation governing this area of law, particularly criminal procedure Code of the RA and the RA Law on "Operative-sinvestigation", giving specific recommendations for legislative changes that will allow to create additional guarantees of the constitutional and legal protection of a human's and a citizen's rights to privacy of correspondence, telephone conversations, postal, telegraph and other communications.